ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ

ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ՊՈԼԻՏԵԽՆԻԿ)
ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

**РЕСПУБЛИКА АРМЕНИЯ**
**МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ**
**ГОСУДАРСТВЕННЫЙ ИНЖЕНЕРНЫЙ УНИВЕРСИТЕТ АРМЕНИИ (ПОЛИТЕХНИК)**
**ВАНАДЗОРСКИЙ ФИЛИАЛ**

ՀՀ, 2019 Վանաձոր, Շինարարների փող. -12
РА, г. Ванадзор. Ул. Шинарарнери-12

Հեռ 032258570
055143933
e-mail: seua.vanadzor.gnumner@ mail.ru

№ 238 /ԿԲ

<<09>> 10 2014թ.

**«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/13» ծածկագրով**
*ընթացակարգի հրավերի*
<<ՀՊՃՀՎՄ-ՇՀԱՊՁԲ-14/19>>ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/13» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում "Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարանի (Պոլիտեխնիկ)" ՊՈԱԿ-ի Վանաձորի մասնաճյուղի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանք (ներ):
Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում <<ՀՊՃՀՎՄ-ՇՀԱՊՁԲ-14/19>>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել "Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարանի (Պոլիտեխնիկ)" ՊՈԱԿ-ի Վանաձորի մասնաճյուղ Շինարարների 12 3315 սենյակ հասցեյով , մինչև 2014թ. Հոկտեմբերի 17 ը, ժամը 11-30ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Արուսյակ Մաղոյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն "Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարանի (Պոլիտեխնիկ)" ՊՈԱԿ-ի Վանաձորի մասնաճյուղի շենքում, Շինարարների 12 հասցեով, N --3315- սենյակում, 2014թ. Հոկտեմբերի 17-ն, ժամը 11-30 ին:

Գնման առարկա է հանդիսանում Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարանի (Պոլիտեխնիկ)" ՊՈԱԿ-ի Վանաձորի մասնաճյուղի կարիքների համար՝ Գրասենյակային կահույքի ձեռքբերումը:

Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարանի (Պոլիտեխնիկ)" ՊՈԱԿ-ի Վանաձորի մասնաճյուղի կարիքների համար՝ Գրասենյակային կահույքի մատակարարման (որոնք կազմված են՝ 6 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 2), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 3): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/13 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը(Հավելված N 4):

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարանի (Պոլիտեխնիկ)" ՊՈԱԿ-ի Վանաձորի մասնաճյուղ էլեկտրոնային փոստի հասցեն է՝ seua.vanadzor.gnumner@mail.ru:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

- Քանի որ գնումը կատարվում է Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա պայմանագիրը ուժի մեջ է մտնելու ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

Տնօրեն՝ Ա.Խառատյան

կատ. Ա.Մաղոյան
հեռ. 055143933